## Արձանագրություն N 2

**«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար ծրարների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «16» հունվարի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Աղավնի Բուդուլյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էլլադա Արզաքանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄՀ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Կարեն Մելքոնյանը՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-01/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2017թ.-ի հունվարի 16-ին, ժամը 10:00-ին:

**2.Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

2.1 Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

2.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 110<br>Հեռ. (010)558483 |
| 2 | «ՍԱՔԻ» ՍՊԸ | ՀՀ, ք. Գորիս, Անկախության 2/31<br>Հեռ. (091)431563 |
| 3 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | ք. Երևան, Ա. Ավետիսյան 78, բն. 3<br>Հեռ. (099)113441, (010)323324 |
| 4 | «Հայկարլի» ՍՊԸ | ք. Երևան, Կիևյան 18/6<br>Հեռ. (091)206115 |

2.3 Համակարգում 29.12.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

**3.1.1** «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի, «Հայկարլի» ՍՊԸ-ի և «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.1.2** «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ Հավելված 3.1-ի՝ <<Հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին>>. Համակարգում «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 3.1-ի փոխարեն կցված է <<Ընթացակարգին մասնակցելու դիմում>>՝ Հավելված 1:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**3.2.1** «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.2.2** «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ՝ <<Ընթացակարգին մասնակցելու դիմումում>>՝ Հավելված 1, հստակ սահմանված չէ՝ յուրաքանչյուր չափաբաժնում նշված ապրանքը որ երկրի արտադրության ապրանք է հանդիսանում:
**3.2.3** «Հայկարլի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ՝ <<Գնի առաջարկի>>՝ Հավելված 4, որը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ /փաստաթղթում չի դիտվում որևէ էլեկտրոնային թվային ստորագրության առկայություն/:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետ՝ Կարգ/ 35-րդ կետի 9-րդ ենթակետը՝ ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և 45-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Հայկարլի» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գներն են՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1. <<Սաքի>> ՍՊԸ* | | | 2. <<Սմարթլայն>> ՍՊԸ* | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Ծրար | 7564750 | 1512950 | 9077700 | 8229166.67 | 1645833.33 | 9875000 |
| 2 | Ծրար,մեծ A4 ձևաչափի համար | 1600000 | 320000 | 1920000 | 1933333.33 | 386666.67 | 2320000 |
| 3 | Նամակի ծրար, A5 ձևաչափի | 2714000 | 542800 | 3256800 | 3697333.33 | 739466.67 | 4436800 |

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 3. «Մեծ Ծիածան» ՍՊԸ* | | | 4. «Հայկարլի» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Ծրար | 14062500 | 2812500 | 16875000 | - | - | - |
| 2 | Ծրար,մեծ A4 ձևաչափի համար | 2333333.33 | 466666.67 | 2800000 | 3600000 | 0 | 3600000 |
| 3 | Նամակի ծրար, A5 ձևաչափի | 4916666.67 | 983333.33 | 5900000 | 8260000 | 0 | 8260000 |

*<<Սաքի>> ՍՊԸ-ն, «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ներկայացրել են հայտարարություն այն մասին, որ իրենց կողմից հայտով առաջարկվող 1-3-րդ չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ:

**5.Հանձնաժողովը որոշեց.**

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2017թ. հունվարի 18-ին ժամը՝ 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6.Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել համապատասխան մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ____________ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ ____________ Աղավնի Բուդոյան

____________ Անահիտ Ավագյան

____________ Էլլադա Արզաքանյան

Քարտուղար՝ ____________ Մարիամ Հայրապետյան